ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2018թ. N 389 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 04 արձանագրությունը՝ որոշում եմ.

1.2018 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1)ապահովել կիրառված արտոնությունների կատարումը,

2)արտոնություններից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 16
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2018թ. N 390 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 04 արձանագրությունը՝ որոշում եմ.

1.2018 թվականի համար «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2.«Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1)ապահովել կիրառված արտոնությունների կատարումը,

2)արտոնություններից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 16
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2018թ. N 391 -Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ որոշում եմ.

1.2018 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքի բոլոր բնակավայրերում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

2.Լսումները (քննարկումները) անցկացնել՝

1)2018 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 13:00-ին Բյուրեղավան բնակավայրում՝ «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում. հասցեն՝ քաղաք Բյուրեղավան, Վազգեն Սարգսյան փողոց 18/44,

2)2018թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 12:00-ին Նուռնուս բնակավայրում՝ վարչական ղեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Նուռնուս, գլխավոր փողոց թիվ 15 վարչական շենք,

3)2018թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 14:00-ին Ջրաբեր բնակավայրում՝ վարչական ղեկավարի նստավայրում. հասցեն՝ գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց թիվ 13 վարչական շենք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 16
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2018թ. N 392 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԱՍՏԻՃԱՆՆ ՈՒ ՀԵՆԱՊԱՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակը, օժանդակ շինությունը, ջրավազանը, աստիճանն ու հենապատը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն և չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականի հուլիսի 17-ին տրված N Աբ-1401 արխիվային տեղեկանքը, շինությունների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրն ու Մեսրոպ Հովհաննեսի Հարությունյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Աբովյանի Նուռնուս այգետարածքի թիվ 1 տեղամասի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1-ին փողոց 10:

2.Մեսրոպ Հովհաննեսի Հարությունյանին (ծնված՝ 1965թվականի մարտի 31-ին) պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 1-ին փողոց 10 (ծածկագիր՝ 07-051-0156-0015) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.05հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 186.7 քառակուսի մետր արտաքին (124.47 քառակուսի մետր ներքին) մակերեսով այգետնակը, 6.31 քառակուսի մետր արտաքին (4.88 քառակուսի մետր ներքին) մակերեսով օժանդակ շինությունը, 15.91 քառակուսի մետր արտաքին (11.15 քառակուսի մետր ներքին) մակերեսով ջրավազանը, 8.0 քառակուսի մետր արտաքին ու ներքին մակերեսով աստիճանը, 1.14 քառակուսի մետր մակերեսով հենապատը ճանաչել օրինական:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 17
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2018թ. N 393 -Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Ջենֆերա Վարդանի Աթոյանի կողմից լիազորված անձ Կարինե Սեթիկի Հովհաննիսյանի հայտը՝ որոշում եմ.

1.Ջենֆերա Վարդանի Աթոյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի (նախկին Հ. Հարոյան պողոտա) փողոց թիվ 31/75 (ծածկագիր՝ 07-003-0020-0084, վկայական՝ N 2513430) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության խանութի նախագծային աշխատանքների մշակման համար:

2. Ջենֆերա Վարդանի Աթոյանին՝

1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման,

2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն

որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 17
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2018թ. N 394-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 18 ՇԵՆՔԻ ԹԻՎ 20 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Արթուր Մնացականովի դիմումը՝ որոշում եմ.

1. Արթուր Մնացականովին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 18 շենքի թիվ 20 բնակարանի (վկայական՝ 0167311 տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյանի փողոց 18 շենք 20 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 18
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2018թ. N 395-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի
N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 33-րդ հոդվածի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 1-ի N 01/15.1/3807-18 գրությունը և ելնելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում տեխնիկական բնույթի ճշգրտումներ կատարելու անհրաժեշտությունից՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 04-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշմամբ հաստատված NN 1-19 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-19 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 19
ք.Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2018թ. N 396-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականիմարտի 19-ի№ 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատվածկարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մերի Սարգսյանի հայտը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոցթիվ 2 (ծածկագիր՝ 07-003-0031-0004, վկայական՝ N25092017-07-0070) հասցեի դպրոցի հասարակական կառուցապատման հողամասում պարսպի և մետաղական ցանկապատի կառուցման նախագծային աշխատանքների մշակման համար:

2. «Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,

2)կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 19
ք. Բյուրեղավան